

ԿԱՐԾԻՔ

Պաշտոնական ընդդիմախոսի

Երեմ Հազարապետի Բաղդասարյանի «Ջրամբարային հիդրոհանգույցի տեխնիկատնտեսական ցուցանիշների արդյունավետության բարձրացման ուղիները Տոլորսի ջրամբարի օրինակով» թեմայով ատենախոսական աշխատանքի վերաբերյալ ներկայացված 2.01.01 - «Ընդհանուր երկրագործություն, հողագիտություն, հիդրոմելիորացիա և ագրոքիմիա» մասնագիտությամբ տեխնիկական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար

Ատենախոսության թեմայի արդիականությունը

Հայաստանի Հանրապետության ջրային ռեսուրսների արդյունավետ կառավարման հիմնախնդրի լուծումն ունի կարևոր գործնական և տնտեսական նշանակություն այն հիմնավորմամբ, որ Հանրապետության տարածքում ձևավորված մակերեսային հոսքը հաշված օրերի ընթացքում կարող է հեռանալ հանրապետության տարածքից, եթե չլինեն դրանց կարգավորման արդյունավետ միջոցառումներ, նախագծեր և ծրագրեր: Չնայած այս ոլորտում իրականացված պետական խոշորամաշտաբ ծրագրերի, այնուհանդերձ տնտեսության տարբեր ճյուղերին բավարար ջրամատակարարում իրականացնելու համար անհրաժեշտ է հետազոտել և իրականացնել այնպիսի աշխատանքներ, որոնց արդյունքում ոչ միայն հնարավոր կլինի մեծացնել հանրապետության ջրամբարաշինարարության տեմպերը, այլ նաև ապահովել գործող ջրամբարային հիդրոհանգույցների շահագործման արդյունավետության բարձր մակարդակ: Բնական է , որ ջրամբարային հիդրոհանգույցները հանդիսանում են տարբեր բարդության հիդրոտեխնիկական կառուցվածքների համախումբ, որոնցից յուրաքանչյուրի աշխատանքի արդյունավետությունից է կախված ջրամբարային հիդրոհանգույցի շահագործման արդյունավետությունը: Նմանատիպ խնդիրներին անդրադառնալը էլ ավելի է կարեվորվում տարածաշրջանային գործընթացների հնարավոր սցենարների դիտարկման տեսանկյունից, քանի որ անմիջապես Հայաստանին սահմանակից նոր կառուցվող ջրամբարները կարող են էապես ազդել մեր հանրապետության մակերեսային հոսքի

բավարար ձևավորման վրա: Այս տեսանկյունից ներկայացված ատենախոսության թեման արդիական է և բխում է մեր հանրապետության ռազմավարական նպատակներից և խնդիրներից:

Գիտական դրույթների և եզրահանգումների ճշտությունը

Ատենախոսության գիտական դրույթների և եզրահանգումների ճշտությունը պայմանավորված է հեղինակի կողմից ձևակերպված խնդիրների լուծման մեթոդոլոգիայով, ստացված արդյունքների վելուծությամբ և գնահատմամբ: Կիրառելով ջրամբարային հիդրոհանգույցների և մասնավորապես քարալիցքային և քարահողային պատվարների ուսումնասիրման գոյություն ունեցող մեթոդները, հեղինակի կողմից կատարվել է Տոլորսի ջրամբարային հիդրոհանգույցի առանձին կառուցվածքների նախագծային և շահագործական ցուցանիշների ուսումնասիրություն, արդյունքները համեմատվել են նորմաներով նախատեսված տեխնիկական շահագործական պայմանների հետ, բացահայտվել են հիդրոհանգույցի առանձին կառուցվածքների շահագործական պայմաններին վերաբերող խախտումները և շեղումները, որոնց հիման վրա մշակվել են դրանց բարելավմանն ուղղված միջոցառումներ:

Քարահողային էկրանով և միջուկով պատվարի երկրաչափական մոդելավորման հիման վրա հետազոտվել են պատվարի մարմնից ֆիլտրացիայի օրինաչափությունները, ստացվել են կիրառական հաշվարկային բանաձևեր՝ ֆիլտրացիայի ուժգնությունը և ուղվածությունը գնահատելու համար: Գնահատվել են ջրային պաշարների արդյունավետ կառավարման հիմնախնդիրները Սյունիքի մարզի օրինակով, ջրատնտեսական հաշվարկների հիման վրա տրվել են առկա ջրային պաշարների որակական և քանակական գնահատական: Գնահատվել են հիդրոտեխնիկական մի շարք կառուցվածքների շահագործման պայմանները և տրվել են համապատասխան եզրակացություններ դրանց շահագործման անվտանգության մակարդակը բարձրացնելու համար: Ատենախոսության եզրահանգումները բխում են ատենախոսության գիտական նորույթից և հիմնադրույթներից: Դրանց ճշտությունը և հիմնավորվածությունը կասկած չի առաջացնում, քանի որ դրանք

ստացվել են ջրամբարային հիդրոհանգույցների ուսումնասիրության արդի մեթոդներով և եղանակներով: Ատենախոսության 7 եզրակացությունները տրամաբանական կապի մեջ են գիտական նորույթի և հետազոտության արդյունքների հետ, իսկ գիտական եզրահանգումների գիտագործնական արժանահավատությունը բխում է արտադրության մեջ կատարված 4 գործնական առաջարկների բովանդակությունից, որոնց ներդրման վերաբերյալ հեղինակի կողմից ներկայացված է ներդրման տեղեկանք:

Ատենախոսության գիտական նորույթը և հիմնավորման աստիճանը

Ատենախոսության գիտական նորույթը հմնավորված է տեսական և գործնական հետազոտությունների արդյունքներով: Գնահատվել է ջրամբարային հիդրոհանգույցի առանձին կառուցվածքների նախագծային և շահագործական ցուցանիշները և ստացված արդյունքները համեմատվել են նորմատիվային տեխնիկական ցուցանիշների հետ, ինչի արդյունքում կատարվել են համապատասխան եզրահանգումներ: Տեսական և փորձնական հետազոտություններով ցույց է տրվել ֆիլտրացիոն ելքերի և դեպրեսիոն կորի փոփոխման օրինաչափությունները՝ կախված վերին և ներքին բյեֆներում ջրի հորիզոնների փոփոխություններից: Բացահայտվել են քարալիցքային միջուկով և էկրանով պատվարից ֆիլտրացիայի առանձնահատկությունները: Սյունիքի մարզի ջրային պաշարների հիդրոլոգիական և ջրատնտեսական հաշվարկների հիման վրա գնահատվել են լրացուցիչ կուտակման ենթակա ջրային պաշարները, ոռոգելի հողատարածքների մակերեսները և հիդրոտեխնիկական մի շարք կառուցվածքների շահագործման պայմանները:

Բարձր գնահատելով ատենախոսական աշխատանքի տեսական և գործնական նշանակությունը, հարկ է նշել, որ այն զերծ չէ թերություններից և բացթողումներից, որոնք ներկայացված են ստորև բերվող դիտողություններում:

1. Ատենախոսության առաջին գլխում հեղինակը անդրադարձել է հանրապետության ջրային պաշարների համառոտ նկարագրին, անդրադառնալով ինչպես

մակերեսային, այնպես էլ ստորերկրյա ջրային պաշարներին, սակայն բերված ցուցանիշներն ունեն շատ ընդհանրական և միջինացված նշանակություն և չեն առնչվում ուսումնասիրվող օբյեկտի ջրային պաշարների հետ:

2. Ատենախոսության 1.2,1.3,2.1 ենթագլուխներում առկա են խմբագրական և տեխնիկական մի շարք սխալներ, մասնավորապես առկա են մասնագիտական մտքերի, սահմանումների և հասկացությունների որոշակի կրկնություններ:
3. Ատենախոսության երրորդ գլխում ներկայացվել են են քարահողային (քարալիցքային) պատվարների նախագծման հաշվարկային մեթոդների ուսումնասիրության արդյունքները, սակայն հետազոտությունները հիմնականում վերաբերում են ջրամբարային հիդրոհանգույցի հակաֆիլտրացիոն տարրերի աշխատանքի գնահատմանը, մյուս կառուցվածքների վերաբերյալ նմանատիպ ուսումնասիրությունների տվյալներ չեն ներկայացված:
4. 4.4. ենթագլխում հեղինակը անդրադարձել է Սյունիքի մարզի ջրային պաշարների օգտագործման տնտեսական արդյունավետության գնահատմանը, սակայն ներկայացված չեն այս տարածաշրջանում առկա գյուղատնտեսական նշանակության հողերի օգտագործման վիճակը և դրանց արդյունավետ կառավարման հիմնահարցերը:

Ատենախոսության համապատասխանությունը կանոնակարգի պահանջներին

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, 4 գլուխներից, ընդհանուր եզրակացություններից և առաջարկություններից, 117 անուն գրականության ցանկից, հավելվածներից: Ատենախոսությունը շարադրված է 124 էջի վրա, որը ներառում է թվով 26 աղյուսակ և 23 նկար: Ատենախոսության սեղմագիրը կազմված է պահանջվող չափանիշներին համապատասխան և այն արտացոլում է ատենախոսության հիմնական դրույթները, գիտական նորույթը և եզրակացությունները: Ատենախոսության հիմնական դրույթների հիման վրա հրատարակված են 6 գիտական հոդվածներ, որից 2 առանց համահեղինակների: Բոլոր հոդվածները հրատարակված են ԲՈԿ կողմից ընդունված գիտական տեղեկագրերում: Եզրակացությունները բխում են ատենախոսական

աշխատանքի գիտական նորույթից, տեսական և դաշտային հետազոտությունների արդյունքներից: Ատենախոսական աշխատանքում ստացված արդյունքները կարել է կիրառել համայնքների խոշորացման արդյունքում ձևավորված նոր վարչական տարածքի հողային և ջրային պաշարների արդյունավետ կառավարմանն ուղղված ծրագրերում:

Եզրակացություն

Ամփոփելով Երեմ Հազարապետի Բաղդասարյանի «Ջրամբարային հիդրոհանգույցի տեխնիկատնտեսական ցուցանիշների արդյունավետության բարձրացման ուղիները Տոլորսի ջրամբարի օրինակով» թեմայով ատենախոսական աշխատանքի ամբողջական բովանդակությունը, գտնում ենք, որ ներկայացված ատենախոսական աշխատանքը կատարված է տեսական, գործնական և մեթոդական բարձր մակարդակով, այն իր հետազոտության արդյունքներով, գիտական նորույթով, եզրակացություններով և արտադրությանն արված առաջարկություններով նպատակամղված է լուծելու ջրամբարային հիդրոհանգույցի տեխնիկատնտեսական ցուցանիշների արդյունավետության բարձրացմանը՝ Տոլորսի ջրամբարի օրինակով: Գտնում ենք, որ Երեմ Հազարապետի Բաղդասարյանի թեկնածուական ատենախոսական աշխատանքը լիովին համապատասխանում է ՀՀ-ում ԲՈԿ -ի կողմից աստիճանաշնորհման կանոնակարգի 7-րդ կետի պահանջներին, իսկ նրա հեղինակը՝ Երեմ Հազարապետի Բաղդասարյանը, արժանի է Զ.Օ1.Օ1. - «Ընդհանուր երկրագործություն, հողագիտություն, հիդրոմելիորացիա և ագրոքիմիա» մասնագիտությամբ տեխնիկական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը:

Պաշտոնական ընդդիմախոս

ՀԱԱՀ հողաշինարարության և հողային

կադաստրի ամբիոնի պրոֆեսոր, տեխնիկական

գիտությունների դոկտոր

տ.գ.դ., պրոֆեսոր Պ.Ս.Էֆենդյանի ստորագրությունը իր անձնական և ՀԱԱՀ

գիտական քարտուղար, կ.գ.թ., դոցենտ Գ.Ավագյան:

